Ռուբիկ Թովմասյան

ԻՐԱԿԱՆՈՒՄ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՍՊԱՆԵԼ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՐԴԿԱՆՑ...

Վաղուց հայտնի ճշմարտություն է՝ և այն էլ՝ հաստատված հազարավոր փաստերով, որ պարտությունը ունի մեկ հեղինակ, իսկ հաղթանակը՝ բազմաթիվ: Պարտության հիմնական մեղավորները ամեն կերպ մասնակից լինելու իրենց մեղքը բարդում են ուրիշների վրա, իսկ հաղթանակի պարագայում հերոսության դափնիները բաժանելու համար մտնում են թեժ պայքարի մեջ: Նույնիսկ հերոսական դեպքերից և դրանց կազմակերպման ու իրականացման պրոցեսներից անտեղյակ մարդիկ իրենց հռչակում են հիմնական դերակատարներ: Նմանատիպ այս կարգի պատկեր է նաև Ջեմալ փաշայի սպանության պարագայում: Այս սկզբունքային հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է օգտվել ժամանակցի թողած օբյեկտիվ և անաչառ տվյալների և փաստերի վերլուծությունից, որը եղել է անվանի լրագրող, Թիֆլիսի «Սովետական Վրաստան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ, այնուհետև Պետրոս Ադամյանի անվան դրամատիկական թատրոնի ադմինիստրատոր, ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բնորոշմամբ «ծուռ լոռեցի» Միքայել Սողոմոնի Այվազյանը: Նա հայ ժողովրդի տաղանդավոր գիտնականներ Հրաչյա և Սուրեն Այվազյանների հայրն է:

Վառ հայրենասեր Միքայել Այվազյանը (1901-1979թթ.) 1923 թ. ձեռնամուխ է եղել և հավաքել հսկայածավալ նյութեր, որոնք առնչություն են ունեցել Հայոց մեծ ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ երիտթուրք եռյակի անդամ, Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշայի սպանությանը, որը տեղի է ունեցել 1922 թ. հուլիսի 21-ին, մոտավորապես երեկոյան ժամը 10-ին, Վրաստանի մայրաքաղաքում, չեկայի շենքից ոչ հեռու գտնվող Պետրոս Մեծի փողոցում: Սակայն նշված նյութերը հայտնի պատճառներով իր ապրած տարիներին չէր կարող հրապարակել և ստիպված այն չկորչելու համար ամբողջ հավաքած նյութերը վստահել ու փոխանցել է իր ազգականին՝ Առաքել Ավետիսյանին, ով գրեթե 40 տարի պահել է իր տան նկուղի թղթապանակներում: Երջանիկ պատահականությամբ Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցի նախաշեմին՝ 2015 թ. փետրվարին Առաքելի թոռները իրենց տան նկուղի տրցակներում գտնում են այդ ձեռագրերը և հանձնում Մ. Այվազյանի թոռներին: Նրանք գտնված արխիվի մի բաժինն են 2016 թ. հրատարակել՝ «Ովքեր են սպանել Ջեմալ փաշային» գրավիչ վերնագրով գիրքը՝ իրավացիորեն որպես հեղինակ նշելով Միքայել Այվազյանին՝ մատուցելով իրենց հարգանքի տուրքը հայրենասեր պապի հիշատակին: Ահա օրինակելի հայ մեծ մարդ, ով իր երեխաներին և թոռներին, իրեն ճանաչողներին դաստիարակել է ազգին անմնացորդ ծառայելու ոգով, անզուգական մարդ, ով իր ապրած ամբողջ կյանքը նվիրաբերել է ազգային վեհ գաղափարին՝ հայրենիքի վերածննդին և կորցրած պատմական հողերի վերատիրմանը:

Գրքում բազմաթիվ էջեր են հատկացված Բաբերդ-Խոտորջրի, Կարինի ու Տայքի հայության 1915 թ. կոտորածների նկարագրությանը, բռնագաղթին, Պաղեստինյան ճակատում Ջեմալ փաշայի կողմից հայ տարագիրների նկատմամբ ցուցաբերած գազանություններին: Ահա տարագիրներից մեկը՝ Շողակաթն այսպես է նկարագրել այդ սարսափներից մեկ դրվագը.

«...Սամսաթից մեր կարավանը քշվեց դեպի Ուրֆա, ապա դեպի Խառան: Մեր կարավանի կեցած տեղը հանկարծ երևաց Ջեմալ փաշան՝ իր շքախմբով: Սուրիո Աստծո՝ Ջեմալ փաշայի երևալով մեր կարավանի մեջ հուսո նշույլ մը սավառնաց, որովհետև մենք լսած էինք, որ Ջեմալը տարակարծիք է Թալեաթի և Էնվերի հետ և դեպի հայերը բայրացակամ է (Ցավոք սրտի այս թյուր կարծիքին են արտասահմանում գտնվող որոշ գրականագետներ, որոնք հատուկ աշխատություններում ձգտում են հիմնավորել այդ տեսակետը):

Մի խումբ կանայք, խոտորջուրցի Մարուզ հանըմի առաջնորդությամբ, ծնկաչոք դիմում են ամենազոր փաշային. «Գթացեք, փաշա, վերև Աստված, ներքը՝ Դուք..., գթա-

ցեք, վասնզի մեր մեջ այլևս այր մարդ չկա, մնացել ենք միայն մանկտիք ու թշվառ պառավ կանայք...»:

Ձեմալ փաշան ձեռքով իր կարճ մորուքի հետ խաղալով՝ աչքե կանցունե իր առջև բազկատարած և չոքած աղաչավոր կանանց ու մանուկներին և սպառնագին կգոչե. «Օձին էգն ու որձը չըլլար... Հայ կանայք ավելի վտանգավոր են, քան այրերը...», և ձեռքով կարավանը քաշելու հրաման կարձակե:

Ան ատեն Մարուզ հանըմը, կմախքացած բռունցքները երկարացնելով փաշայի կողմը, կանիծե անոր, ըսելով՝

- Փաշա՛, փաշա՛, քեզանից մեծ Աստված կա... Մեր զավակները մեռած չեն, անոնք Ռոսիա կգտնվին ու օր մը անոնց պատասխան պիտի տաս...,- ապա դիմելով երկնքին՝ անհուն հուսահատության մեջ այսպես կոչեց, - Օ, Տե՛ր իմ, եթե դուն կաս՝ խոնարհեցուր զունկն քո և ակն քո և լուր ու տես...» (Տե՛ս Այվազյան Միքայել, «Ովքեր են սպանել Ձեմալ փաշային», Եր. 2016, էջ՝ 47):

Այսպիսի մայրական հորդոր ուղղված իրենց պատվախնդիր որդիներին՝ եղեռն ծրագրավորողների և իրականացնողների նկատմամբ լսվում էին այդ անբիրտ ու մարդկային լեզվով անպատմելի, սոսկալի եղանակներով ցեղասպանության ենթարկված Արևմտյան Հայաստանի և Օսմանյան Թուրքիայի այլ հայաշատ վայրերից: Հիրավի, ինչպես հոխորտացել էր Թալեաթը՝ 1915 թվականի երեք ամսում ավելին արվեց, քան արյունարբու կարմիր սուլթան Համիդն արել էր 30 տարում...

Եկել էր հատուցման ժամը և արդարահատույցը չուշացավ: Ծնվեց ազգային հերոսների մի աստղաբույլ՝ հայ վրիժառուները, որոնց մասին շատ կցկտուր և ոչ ամբողջական տեղեկություններ կան հրատարակված մեզանում: Այնինչ հայ երախտապարտ սերունդներն անխտիր պետք է փառաբանեն Սողոմոն Թեհլիրյանին, Արամ Երկանյանին, Արշավիր Շիրակյանին, Ստեփան Ծաղիկյանին, Պետրոս Տեր-Պողոսյանին, Արտաշես Գևորգյանին, Միսաք Թորլաքյանին...

Հայ ժողովրդի մաքառումներով հարուստ պատմությունը, հանգամանքների բերումով, ունեցել է երախտամոռ թշնամուն պատժելու արժանահիշատակ դեպքեր, որոնց շնորհիվ հաջորդ սերունդները և՛ հպարտացել են, և՛ նմանօրինակ քաջագործություններով դաստիարակվել՝ ձգտելով նմանվել նրանց: Բավական է բերել մեկ օրինակ մեր իսկ պատմությունից: Այսպես, 705 թ. արաբներն իրենց մոտ խաբեությամբ հրավիրելով հայ իշխաններին՝ լցրին Խրամ գյուղի եկեղեցում և այրեցին: 500 տարի հետո Զաքարե Բ իշխանը, որն իր հայրենանվեր գործունեության և քաջագործությունների համար կրել է հայ Բագրատունիների «շահանշահ» տիտղոսը, գրավելով Արդաբիլ քաղաքը, առանց խաբեության հավաքելով արաբ իշխաններին՝ փակում է մզկիթի մեջ: Այրելով իշխաններով լի մզկիթը՝ հայտարարում է, որ վրեժը անժամանցելի պարտավորություն է և պատմական դաս՝ նախ իր հայրենակիցներին հայրենասիրական ոգով դաստիարակելու, իսկ նենգ և խաբեբա թշնամուն՝ հասկացնելու, որ իրենց պապերի արարքի համար պատժվելու են՝ ի ցույց գալիք սերունդների: Հակառակ դեպքում՝ անընդհատ պարտության, լաց ու կոծի, կորստի, ջարդի ու փախուստի մասին խոսելով՝ թուլացնում ենք մեր ժողովրդի դիմադրության ու պայքարի գաղափարը: Կարծում ենք, որ մեր ժողովրդի ոգին անկոտրում պահելու նպատակով անհրաժեշտ է կազմել հայ ժողովրդի պատմության հերոսական պայքարի դրվագներն ի մի բերող պատմագիտական նյութերի ժողովածու և դպրոցներում դրանով կրթել մանկահասակ սերնդին: Գտնում ենք նաև, որ բացարձակ անընդունելի են որոշ «մտավորականների» այն ապազգային պնդումները, թե Եղեռնից 100 տարուց ավելի է անցել, ինչքա՞ն կարելի է վրեժի ցասումով ապրել, ի վերջո պետք է հարևանների հետ հարաբերությունները բարելավել: Այն պնդումները, իբրև թե թուրքը փոխվել է, թե 21-րդ դարի թուրքը այլևս նույն թուրքը չէ, զուտ խաբկանք և ցնորք է: Դրա ապացույցը ստացանք վերջերս՝ Քեսաբում և Արցախյան պատերազմում և հատկապես՝ ապրիլյան քառօրյայում: Այո, դեռ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր հայ ծնված օրվանից դաստիարակվի «կենսաբանական» թշնամուն ճանաչելու, պատմական վրեժի և ատելության ոգով, այնքան ժամանակ, մինչև մեր ուժը չհերիքի, որ լուծենք պատմական հայրենիքի ամբողջ տարածքի վերա-

կանգնումը: Արդեն հայտնի աքսիոմա է, որ աշխարհում միայն ուժն է հարց լուծում, ուժի հետ են հաշվի նստում, ուժն է հարկի, այդպես է եղել անցյալում, նույնն է ներկայումս և այդպես է լինելու միշտ: Այսինքն, մեր պատմությունը տնտեսապես հզոր և ուժեղ լինելու պահանջ ու պատասխանատվություն է պարտադրում մեզ: Առանց դրա ոչինչ չի ստացվի, մնացածը պատրանք է:

Այժմ ազգային հպարտության զգացումով նշենք մեր հերոս վրիժառուների կատարած վրեժի արտահայտման հրավառուն, փայլուն գործողությունները եղեռնի կազմակերպիչների ոչնչացման գործում: Հավերժ փառք ու պատիվ նրանց: Այդ գործողությունները հիմնված էին Հայ Յեղափխական Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովի գաղտնի որոշման վրա:

1919 թվականի աշնանը ակախ Հայաստանի մայրաքաղաք Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը, որը Մեծ Եղեռնից հետո առաջին ընդհանուր ժողովն էր, կայացնում է պատմական և հանդուգն որոշում՝ Մեծ Եղեռնի պատասխանատու երիտթուրք պարագլուխներին ու Արևելյան Անդրկովկասում նրանց քաղաքականությունը շարունակած մուսաֆաթական ելուզակներին պատժելու մասին, որը պատմագրության մեջ է մտնում «Նեմեսիս» արդարահատույց գործողություն անվանմամբ: Կազմվում է ընդհանուր ցանկը այն երիտթուրք և մուսաֆաթական պատասխանատուների, որոնք մասնակից կամ աջակից են եղել Հայոց Եղեռնին, Կովկասյան ջարդերին, ինչպես նաև նրանց աջակցած հայ մատնիչներին և այն ուղարկվում է ՀՅԴ բոլոր Կենտրոնական կոմիտեներին աշխարհի բոլոր կողմերում, որպեսզի նրանում ընդգրկված որևէ անհատ այդ մարմնի սահմաններում հայտնվելիս տեղական մարմինն ինքը իրագործի նրանց մահապատիժը:

Վերհիշենք այդ որոշումը փայլուն իրականացնող քաջակորով հայորդիներին և լսենք նրանց «ձայնը»:

Սողոմոն Թեհլիրյան (ճիշտ ազգանվան ճիշտ գրելաձևը այսպիսին է)

Ծնվել է 1886 թվականին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքը տեղափոխվել է Երզնկա: Եղեռնի պատճառով կորցրել է իր գերդաստանի 85 անդամների…

1919 թ. գնում է Պոլիս Թալեաթի հետքերով, այնուհետև Բեռլին: Ներկայանում է որպես ուսանող: Ճշտում է Թալեաթի նոր անուն-ազգանունը, հասցեն… 1921 թ. մարտի 15-ի առավոտյան, երբ Թալեաթը դուրս է գալիս բնակարանից և սկսում է առաջանալ փողոցով, Սողոմոնը ընդառաջ է դուրս գալիս և դիմահար կրակում գազան հրեշի գլխին… Այնուհետև Թեհլիրյանը ձերբակալվում է և երկարատև դատավարությունից հետո արդարացվում և ազատ է արձակվում: Մահացել է 1960 թ. ԱՄՆ-ում: Խոստովանում է. «Համակված էի այնպիսի մի ներքին գոհունակությամբ, որի նմանը չէի ապրել երբեք…»:

Արամ Երկանյան

Կարնեցի է, ծնվել է 1900 թ.: Եղեռնից մազապուրծ ապաստանել է Կովկասում: Մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին: Թիֆլիսում (1919 և 1920թթ.) ահաբեկել է Դասիմբեկովին և Սարֆովին: 1922 թ. Բեռլինում ահաբեկել է Բեհաէդդին Շաքիրին: Այնուհետև ապրել է Ռումինիայում, Արգենտինայում… Մահացել է 1934 թվականին: Բացականչում է. «…Այնքան թեթև կըզգայի, կարծես լեռ մը ինկած էր կուրծքիս վրայեն: Վստահ էի գնդակիս մահացության մասին: Հատուցված էր ուխտը Հայ մեռելոցին…»:

Արշավիր Շիրակյան

Ծնվել է 1900 թվականին Կ.Պոլսում: Եղեռնի տարիներին գործել է իբրև սուրհանդակ: Տակավին պատանի Պոլսից մեկնում է Հռոմ և հետապնդում մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, որի վարչապետության օրոք էր տրվել 1915 թվականի կոտորածների որոշումը: 1921 թ. դեկտեմբերի 5-ին ցատկում է փողոցով սլացող կառքի ելքի աստիճանի վրա և սպանում նախկին վարչապետին: Իտալական թերթերը կախարդական հերոսություն են համարում կատարվածը: Այնուհետև Հռոմից անցնում է Բեռլին, Արամ Երկանյանի հետ հետամուտ է լինում Բեհաէդդին Շաքիրին և Ջեմալ Ազիմին: 1922 թ.

ապրիլի 17-ին, միևնույն օրը, երբ Երկանյանը ահաբեկում է Շաքիրին, նույն պահին էլ Շիրակյանը գնդակահարում է Ջեմալ Ազիմին: 1923 թվականին հաստատվել է ԱՄՆ-ում, որտեղ ապրել ու գործել է մինչև մահը՝ 1973 թ.:

Հակոբ Մելքումով, ծագումով Ղարաբաղցի, քաղաքացիական կռիվների հրամանատար, Միջին Ասիայում բասմաչների դեմ մարտերի հերոս, 1922 թ. օգոստոսի 4-ին գնդակահարում է Էնվերին: Պետք է նշել, որ ՀՅԴ-ը միայն այդ դեպքում մասնակցություն չի ունեցել…այսինքն բաժին չի հասել «Նեմեսիս» ծրագիրն իրականացնող վրիժառուներին…

Հայ վրիժառուներին չի հաջողվել գտնել երիտթուրք կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Նազիմին: Սակայն տարիներ անց նա Գերմանիայից վերադարձել է Թուրքիա, կատարել անհաջող մահափորձ Մուստաֆա Քեմալի դեմ, դրա համար էլ մյուս դավադիրների հետ մահապատժի է ենթարկվել: Բացի երիտթուրքերի պարագլուխներից հայ ահաբեկիչները ոչնչացրել են Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության մի քանի գործիչների, որոնք մեղադրվում էին 1918 թ. սեպտեմբերին Բաքվում անմեղ հայերի զանգվածային կոտորած կազմակերպելու մեջ: Այսպես, 1920 թ. հունիսի 19-ին Ա. Երկանյանը Թիֆլիսում սպանել է Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆատալի Խան Խոյսկուն, իսկ 1921 թ. հուլիսի 19-ին Միսաք Թորլաքյանը Կ.Պոլսում գնդակահարել է Շուշիի հայերի ջարդերի կազմակերպիչ, Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբուդ Խան Ջվանշիրին:

Այժմ անդրադառնանք Ջեմալ փաշայի սպանության կազմակերպման ընթացքին և իրականացման մասնակիցներին, որոնք ունեն ճանաչողական նշանակություն, քանզի անհրաժեշտ է զատել նրանց վայ հայրենասերներից... Այս պարագայում ահաբեկման հեղինակները չէին բարձրաձայնել, քանի որ նրանք հանդգնություն ունեցան խորհրդային դաժան պայմաններում, Խորհրդային Վրաստանում՝ չեկայի մերձակայքում գնդակահարելու Ջեմալին և նրա մարդկանց:

Արխիվային փաստաթղթերն անհերքելի ապացուցում են, որ Ջեմալի ահաբեկումը նախաձեռնել և իրագործել է ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեն՝ դաշնակցականներ Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի և նրանց համերկրացի, անկուսակցական Արտաշես Գևորգյանի միջոցով: Ահաբեկման պատասխանատուն էր ՀՅԴ անդամ, խոտորջուրցի Ս. Ծաղիկյանը, որը որոշման իրագործման համար նկատի էր ունեցել իր հայրենակից, անվրեպ նշանառու, նույնպես դաշնակցական Պետրոս Տեր-Պողոսյանին և վերջինիս խորհրդով՝ խոտորջուրցի երիտասարդ Արտաշես Գևորգյանին: ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեի երկու անդամները՝ Կորիուն Ղազազյանը և Տիգրան Ավետիսյանը, կրնկակոխ և աչալուրջ հետևում էին աշխատանքների ընթացքին՝ Ջեմալին ճանաչող մարդկանց ներգրավմամբ կազմակերպելով առերեսումներ և վստահելի հետախույզների միջոցով հետևելով նրա տեղաշարժերին և հանդիպումներին:

Բեռլինում թաքնված ապրելու տարիներին Թալեաթը, Էնվերը և Ջեմալը ապրում էին միօրինակ կյանքով, երեքն էլ գրում էին իրենց հուշերը և ճգնում էին իրենց վրայից գցել հայկական ջարդերի պատասխանատվությունը:

Ջեմալը, ավարտելով իր հուշերը, 1920 թ. մեկնում է Բուխարա, որտեղ սկսում է աշխատել որպես Բուխարական էմիրի ռազմական խորհրդական: Սակայն նա ձգտում էր ցանկացած գնով, թեկուզ որպես մանավոր անձ, վերադառնալ Թուրքիա: Դրա համար նա 1922 թ. գարնանը Բուխարայից ժամանում է Մոսկվա և Թուրքիա մեկնելու համար գալիս է Թիֆլիս: Նա Թիֆլիսում երկար մնալու մտադրություն չուներ: Սակայն պարզվել է, որ նա դեռ չէր կարող Թուրքիա մեկնել, որովհետև Քեմալի կառավարությունը ձգձգում էր նրան անցաթուղթ տալ: Այդ հանգամանքն էլ հնարավորություն է տվել Հայ հեղափոխական դաշնակցության Վրաստանի կենտրոնական կոմիտեին լավ նախապատրաստվելու, մանրազնին ուսումնասիրելու և նոր միայն ատրճանակներն ուղղելու դեպի Ջեմալ փաշան:

Ահաբեկման գործողությունը կատարվել է այսպես. դեպքի օրը երեկոյան Ջեմալն իր մարդկանցով մտնում է Թուրքիայի դեսպանատուն: Դուրս գալով այնտեղից՝ նրանք

բարձրանում են ֆունիկուլյոր՝ ընթրելու: Ղազազյանի նշանակված մարդիկ ստվերի նման աչալուրջ հետևում են նրան, լսում են նույնիսկ, թե նրանք ինչ են խոսում: Զեմալի խմբից առաջ նրանք դուրս են գալիս ֆունիկուլյորից և վարձում են եղած երկու ազատ կառքերը, որպեսզի Զեմալն ու նրա մարդիկ կառք չգտնեն և ստիպված ոտքով իջնեն քաղաք: Ահա այս կարևոր հանգամանքը վճռական նշանակություն է ունենում ահաբեկչության հաջող իրագործման համար:

Զեմալ փաշան և նրան ուղեկցողները, կառք չգտնելով, ստիպված են լինում ոտքով մտնել քաղաք: Ահա նրանց սպասող Ծաղիկյանը, Գևորգյանը և Տեր-Պողոսյանը, արդեն իսկ պատրաստ, նրանց դիմավորում են Երմոլովսկայա փողոցում, Սուրբ Նինայի մենաստանի մոտ: Զեմալ փաշան և նրան ուղեկցողները քայլում են աջ մայթով, իսկ նրանց հետևողները՝ ձախ: Արտաշեսն ահաբեկչությունը հետագայում նկարագրելիս ասել է, որ երբ իրենք ձախ մայթից երկուսով անցել են աջ մայթ, իսկ Ծաղիկյանը մնացել է նույն տեղում, Զեմալը ետ է նայել, կարծես զգացել է իր վրահաս մահը: Առանց երկմտելու՝ Արտաշեսն ու Պետրոսը մի ակնթարթում հանել են ատրճանակներն ու միասին կրակել Զեմալի թիկունքին: Երեք փամփուշտներից խոցվելով՝ Զեմալ փաշան գլորվել է գետնին: 1937 թվականին, ձերբակալվելուց երեք օր առաջ, Արտաշեսն իր կնոջ՝ Արփենիկին և նրա եղբորը պատմել է, որ երբ Զեմալ փաշան տապալվել է, այդ նեղ պահին ինքը հասցրել է համբուրել ատրճանակի փողը՝ ապրելով մեծ երանություն: Զեմալի վայր ընկնելուց հետո նրա քարտուղար Նուսրեթ բեյը, որը քայլում էր նրան թևանցուկ, իսկ համհարզը՝ մի փոքր առջևից, փորձել է զենքի դիմել, սակայն երկու ատրճանակներից տեղացող հինգ գնդակները նրան էլ են տապալել: Այդ պահին համհարզ Սուրսիա բեյն օգնություն կանչելով վազել է Սոլորակիի կողմը, սակայն Պետրոսի անվրեպ գնդակը նույնպես վերջ է դնում նրա կյանքին: Գործը փայլուն ավարտված համարելով՝ Պետրոսը մի համազարկ է տալիս սալահատակին, որպեսզի որոտն ավելի սահմռկեցուցիչ լինի, որ մարդիկ վախից փողոց դուրս չգան ու չխանգարեն իրենց փախուստին, վազում է Արտաշեսի ետևից և նկատում, որ մեկը գրկել է Արտաշեսին ու բաց չի թողնում: Չնայած Արտաշեսը բղավում է. «Բա՛ց թող, տեռոր է», սակայն նա տեղի չի տալիս: Պետրոսը վազելով մոտենում է և նույնպես գոռում. «Բա՛ց թող, քաղաքական տեռոր է»: Անծանոթը, միևնույնն է, մնում է Արտաշեսին պինդ գրկած վիճակում: Այդ պահին Պետրոսը ստիպված կողքից, որպեսզի գնդակն Արտաշեսին չդիպչի, տեղն ու տեղը գնդակահարում է այդ մարդուն: Հետո պարզվում է, որ այդ մարդը հրշեջ խմբի հերթապահ Գարեգին Դիլանյանն է լինում: Նրա հայրը, լսելով այդ գուժը, լացակումած բացականչում է. «Վայն իմ գլխուս, շունը սատկելիս լը մի հայու իր հետ տարավ, էդ հայն էլ բանին անտեղյակ իմ թառլան բալես եղավ»:

Ինչպես նշել ենք՝ Ծաղիկյանը մնացել է ձախ մայթին՝ Պետրոսի և Արտաշեսի թիկունքը պահելու համար: Նա տեսել է, որ Չեկայի շենքից զինվոր է դուրս վազում, որին կարող էին հետևել նաև ուրիշները, և ենթադրել, որ տղաներին թիկունքից վտանգ է սպառնում: Առանց հապաղելու՝ Ծաղիկյանը հանում է իր ատրճանակն ու կրակում, ծակվում է զինվորի վերնաշապիկը և նա ստիպված ետ է փախչում ու պատսպարվում շենքում:

Հարկ է նշել, որ փախուստի ժամանակ տղաների կրակոցից, պատահաբար ոտքից վիրավորվում է մի անծանոթ կին: Այսպիսով, կարևոր չէ, թե որքան են կրակել Պետրոսն ու Արտաշեսը, կարևորն այն է, որ այդ կրակոցներից 9-ը հասել են նպատակին՝ Զեմալ փաշային՝ 3 գնդակ, Նուսրեթ բեյին՝ 5, Սուրսիա բեյին՝ 1, իսկ 2-ը՝ չնախատեսված՝ Դիլանյանինը 1 գնդակ և պատահական մեկ գնդակ ոտքից վիրավորված անծանոթ կնոջը: Այս ամենը փաստացի անձանագրված է տեղում համապատասխան օրգանների, բժիշկների և Անգորայի հյուպատոսության ներկայացուցիչների կողմից, որոնց օգնությամբ էլ ճանաչվել է սպանվածների ինքնությունը:

Ահաբեկչության հենց առաջին րոպեից ՀՅԴ-ը չէր հրաժարվում այն իր վրա վերցնելուց, սակայն կոմիտեի անդամները մինչև վերջ էլ հրաժարվեցին հայտնել այն գործնականում իրագործողների ով լինելը: Արխիվում գտնվող ոչ մի հարցաքննության մեջ չկա գեթ մեկ փաստ, որ կուսակցության ղեկավարներից մեկնումեկն արտաբերած լինի

ահաբեկչությունը կատարողի անուն ազգանունը: Իսկապես, ակտի կազմակերպիչը՝ Ստեփան Ծաղիկյանը և ահաբեկիչներ Պետրոս Տեր-Պողոսյանն ու Արտաշես Գևորգյանը չեն ձերբակալվել և մինչև 1928 թվականը հարցաքննության չեն ենթարկվել: Դա վկայում է այն մասին, որ ահաբեկման ամբողջ գործը շատ կշռադատված, զգույշ և գաղտնի էր կազմակերպված: Այդ է վկայում նաև 1931 թ. հրատարակած Սովետական մեծ հանրագիտարանի 21-րդ հատորի 756 էջում արձանագրվածը. «... Զեմալ փաշան սպանվեց Թիֆլիսում հայկական «Դաշնակցություն» կազմակերպության կողմից, կազմակերպություն, որ լուծեց իր վրեժը նրանից՝ Սիրիայում գտնվելու ժամանակ հայերին ճնշելու համար»: Հանրագիտարանի տված այս տեղեկության համար հիմք են ծառայել հետևյալ տեղեկությունները: Այն ժամանակ, երբ Մետեխի բանտում ստորագրելիս են եղել Դաշնակցության կուսակցության Կովկասյան խմբի դեկլարացիան, Չեկայի նախագահի տեղակալ Մորոզովը հարց է տվել դեկլարացիան ստորագրողներին, թե ասացեք վերջապես, ո՞վ է սպանել Զեմալ փաշային և նրա մարդկանց: Նրանք բոլորն էլ միաբերան պատասխանել են, թե Դաշնակցություն կուսակցությունն ամբողջապես վերցրած, սակայն թե առանձնապես ով է իրագործել արդարահատույցը, իրենք չեն ասի: Խոսքը վերաբերում է այն դեկլարացիային, որի տակ ստորագրել են Դրոն, որպես ՀՅԴ Կենտկոմի կովկասյան խմբերի և Վրաստանի լիազոր, Կ. Ղազազյանը, Բ. Թոփչյանը, Մ. Մակարյանը, Ա. Նալչաջյանը, Տ. Ավետիսյանը՝ որպես Վրաստանի ՀՅԴ ԿԿ-ի անդամներ: Ինչպես հայտնի է, Դրոն այդ տարիներին աքսորական էր Մոսկվայում, գործուղվել էր Թիֆլիս՝ մի կերպ ավարտին հասցնելու Զեմալի սպանության գործով ձերբակալվածների հարցը: «Մեծ թվով մարդիկ էին ձերբակալվել, որոնցից 33-ին արդեն աքսորել էին», - նշում է ձերբակալվածներից Սամսոն Արիստակեսի Կարախանյանը: «Եղան նույնիսկ մի քանի ծիծաղելի ձերբակալություններ: 1923 թ. հուլիսի վերջն էր, արդեն ավելի քանի մեկ տարի հետաքննությունը շարունակվում էր նույն եռանդով: Մի օր էլ բանտախցերից տեսանք, որ չեկիստների նախագահի տեղակալ Մորոզովի ուղեկցությամբ Մետեխի բանտ մտավ Դրոն: Առաջին պարզ հայացքից զգացվում էր, որ Դրոն կալանավոր չէր: Իրեն պահում էր ինքնավստահ, խոսում և մտքեր էր փոխանակում չեկիստների հետ: Դա մեզ՝ կալանավորներիս, որ բոլորս ապշահար նայում էինք ու սպասում, թե ինչ է տեղի ունենում, հանելուկային թվաց: Երկու ժամ հետո մեզ հայտնեցին, որ մեր հարցը որոշված է Մոսկվայում և օրերս մեզ բոլորիս՝ մինչև վերջին մարդը ազատ կարձակեն, որ հենց նոր դեկլարացիա են ստորագրել: Օգոստոսի 4-ին ես նույնպես դուրս եկա բանտից և հետո իմացա, որ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության Վրաստանի մասնաճյուղի ղեկավարությունն իսկապես հայտարարություն էր հրապարակել, համաձայն որի հայտնում էր, որ Դաշնակցությունը Կոմունիստական ղեկավարության հանդեպ ոչ մի թշնամանք չի տածում»: Այդ հայտարարությունը տպագրվել է մամուլում 1923 թ. օգոստոսի 4-ի համարում:

«Բանտից դուրս գալուց հետո մեզ ազատելու հետ կապված շատ մանրամասներ իմացա: Նախ Դրոյի՝ Թիֆլիս գալու և բանտից մեզ շուտափույթ ազատելու մասին: Մեր գործով հետաքրքվել էին Մոսկվայում և որոշում կայացրել: Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոն այդ գործով հատուկ որոշում էր ընդունել: Այդ որոշման իրագործման համար որպես դաշնակցության ղեկավար և անառարկելի մեծ հեղինակություն ունեցող անձի՝ նպատակահարմար են գտել դիմել Դրոյին, որն այդ տարիներին հարկադրաբար գտնվում էր Մոսկվայում, որ մեկնի Թիֆլիս և հետևի այդ որոշումը ճշտությամբ և արագ կատարելուն: Թիֆլիսում գտնվելու օրերին Դրոն ապրում էր Կորյուն Ղազազյանի բնակարանում: Այդտեղ էլ ես հանդիպեցի Դրոյին, ումից էլ իմացա գործի եղելության մանրամասները» (տե՛ս Այվազյան Միքայել, «Ովքեր են սպանել Զեմալ փաշային», Ե., 2016, էջ 91):

Այս անառարկելի փաստերից հետո անհրաժեշտ է անդրադառնալ այս թեման շահարկող վայ հայրենասեր կոչվող, ինքնակոչ իրենց «հերոս համարող ահաբեկիչներին», մատնիչ- դավաճաններին, որոնց պատճառով տուժել են շատ անմեղ մարդիկ: Բոլորը պետք է իմանան, որ պատմություն կեղծողները վաղ թե ուշ մերկացվում են և

դասակարգվում որպես ստոր խաբեբաներ ու համալրում ստորաքարշների և պատվագողերի բանակը:

Հայաստանում, փաստորեն, մինչև այս գրքի լույս ընծայումը գոյություն է ունեցել մեկ աղբյուր՝ ոմն Ազվինի գրածը «Ձեմալ փաշայի սպանությունը» վերնագրով: Այն առաջին անգամ տպագրվել է Բեյրութում՝ «Նաիրի» շաբաթաթերթում 1966 թվականին, իսկ Հայաստանում՝ 1991 թվականին: Ազվինը՝ նույն ինքը Արտաշես Գևորգյանի ցավոք եղբայր Թորգոմ Գևորգյանը, խեղաթյուրել է իրական պատմությունը՝ նշելով, որ Ձեմալի սպանության որոշումը կայացրել է խոտորջուրցիների 13 հոգանոց ինչ-որ «խորհուրդ», այնինչ, ապացուցված փաստ է, որ որոշումն ընդունվել և իրականացվել է ՀՅԴ-ի կողմից: Թորգոմը կարող է խաբել, թյուրիմացության մեջ գցել գործից անտեղյակներին կամ էլ միամիտներին: Թորգոմը մոռանում է, որ գոյություն ունի քննչական գործ, որտեղ ժամանակին ասված ու հաստատված են բոլոր հանգամանքները, մարդկանց ու կուսակցության ղեկավարության ցուցմունքները: Վերջապես գոյություն ունի Համկոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի որոշումը, որի քաղվածքը Դրոն բերել է Թիֆլիս, ինչի հիման վրա էլ Ձեմալի և նրա մարդկանց սպանության գործը դադարեցվել է: Հենց այդ որոշման մեջ էլ պարզորոշ ասված է, որ ահաբեկչությունն իրագործվել է Դաշնակցության կուսակցության կողմից:

Գրքի հեղինակը, իր հայրենասիրական ազնիվ մղումներից և հոգևոր պահանջներից ելնելով, դիմում է աքսորավայրից վերադարձած Կարախանյանին, որը պարզորոշ նշում է ահաբեկչության պատվագողերի «ով» լինելը, այն շարադրված է նշված գրքի 93-101 էջերում.

- «Սամսոն Արիստակովիչ, որքանով ինձ հաջողվել է պարզել, Ձեմալ փաշայի և նրա մարդկանց սպանությունը Ձեր ամբողջ կյանքում չարիք է դարձել Ձեզ համար: Որպես այդ գործի կասկածյալ՝ Դուք 1922 թ. օգոստոսի 9-ից մինչև 1923 թ. օգոստոսի 4-ը նստած եք եղել Մետեխի բանտում: Մանաս Գևորգյանի մատնությամբ, որը ցավոք սրտի Արտաշես Գևորգյանի կրտսեր եղբայրն էր: 1937 թ. սեպտեմբերի 20-ին ձերբակալվել եք, աքսորվել հեռավոր Կոլիմայի կալանավորական ճամբարը և 1947 թ. սեպտեմբերի 20-ին միայն ազատ արձակվել: Ավելին, կալանքից ազատվելուց երկու տարի անց, այսինքն 1949 թ. հունիսի 13-ին, դարձյալ նույն գործով, այս անգամ ամբողջ ընտանիքով եք աքսորվել Ալթայի երկրամաս և միայն 1955 թ. մայիսին ազատվել աքսորավայրից: Ճի՞շտ են արդյոք այս տեղեկությունները:

- Միանգամայն ճիշտ են: Իմ գործն արխիվում է և միշտ էլ կարելի է ատուգել այդ փաստերի ճշմարտացիությունը: Վերջին անգամ, երբ քննվում էր ինձ արդարացնելու հարցը, դատախազ Աբրամիշվիլին ինձ տվեց կարդալու Մանաս Գևորգյանի ձեռքով գրված մատնությունը, որի պատճառով ես 17 տարի բանտում և աքսորում անցկացրի: Ես չեմ զարմանա, եթե վաղը Թորգոմը հորինի, որ Պետրոս Տեր-Պողոսյանն էլ չի մասնակցել Ձեմալի և նրա մարդկանց սպանությանը, որ երկրորդ անձնավորությունը ինքն է եղել, որ Արտաշեսի հետ միասին իրագործել է ահաբեկչությունը, դա նրա մարդկային կերպարն է, նրա խառնվածքն է:

Եվ, վերջապես, ահա Ձեզ եմ տալիս Թորգոմ Գևորգյանի նամակը՝ ուղղված իր քեռի Գրիգոր Չախալյանին, որտեղ իմ աջակցությունն է խնդրում պատվագող Մեսրոպ Ներսիսովին մերկացնելու համար: Թորգոմը Ներսիսովին է պատվագող համարում, ինչն անժխտելի է, բայց Թորգոմն ահաբեկչության գլխավոր դերակատար դարձրել է իր քեռուն՝ Գրիգոր Չախալյանին: Բնական հարց է առաջանում, թե այդ դեպքում ինչու՞ է Թորգոմը դիմում իմ աջակցությանը, չէ՞ որ իր քեռին, ըստ իր հորինածի, ամենամեծ վկան ու ապացույցն է…

-Սամսոն Արիստակեսովիչ, իսկ ի՞նչ գիտեք Ստեփան Ցաղիկյանի ձերբակալության մասին, ինչպե՞ս են կալանավորել նրան:

-Ստալինյան ռեժիմի տարիներին նա թաքնվում էր խոտորջուրցի Չամանյանի հացի փռան ետևի կից սենյակում: Մի օր էլ, «հանկարծակի» այդ սենյակ է ներխուժում Թորգոմը և տեսնում Ծաղիկյանին: Թորգոմի դուրս գալուց կես ժամ հետո չեկիստները

շրջապատում են փուռը և կալանավորում Ծաղիկյանին: Աքսորում են Սիբիր, որտեղ և կնքել է մահկանացուն: Մահվան տարեթիվն անհայտ է:

-Սամսոն Արիստակեսովիչ, իսկ ի՞նչ կասեք Մեսրոպ Ներսիսովի ով լինելու մասին:

-Ըստ Կորյուն Ղազազյանի՝ նա եղել է չեկայի գործակալ, նշանակված էր պաշտպանելու Ձեմալին, սակայն չկարողացավ… բայց հետագայում կեղծ և հնարովի զեկուցագիր է ներկայացրել, հերոսանալու մարմաջով տարված, թե ինքն է սպանել Ձեմալ փաշային Ս. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և Գ. Աթարբեկյանի հանձնարարությամբ: Այսինքն, ոչ միայն պատվագող է, այլ նաև զրպարտիչ…

-Սամսոն Արիստակեսովիչ, իսկ ի՞նչ կարող եք ասել Պետրոս Տեր-Պողոսյանի մասին, ի՞նչ բախտ վիճակվեց նրան:

-Պետրոսը բանտարկվել է Միջին Ասիայում, բայց թե ո՞ր քաղաքում կամ վայրում՝ չգիտեմ և նրա հետագա ճակատագիրն անհայտ է:

1925 թ. Արտաշես Գևորգյանին հաջողվում է ստանալ Հայաստանի կառավարության համաձայնությունը՝ Դոմբասում բնակվող խոտորջուրցիների համար մայր հայրենիքում հիմնադրել նոր Խոտորջուր անունով մի գյուղ: Այն ստեղծվում է ներքին Ախտայի մոտ գտնվող կիսավեր Գորուխ-Գյունեի գյուղում, 720 հեկտար տարածության վրա որպես գյուղատնտեսական կոլեկտիվ՝ Խոտորջրի կոմունան, որն առաջին կոլեկտիվ տնտեսությունն էր Հայաստանում: Ձանազան վայրերից երամ-երամ հավաքված տարագիր խոտորջուրցիներն իրենց անդրանիկ ժողովում Գևորգյան Արտաշեսին ընտրում են կոմունայի նախագահ: Արտաշեսի ղեկավարությամբ Խոտորջրի կոմունան մեծ հաջողությունների է հասնում: Անդրկովկասի և Հայաստանի մամուլը շատ էջեր է նվիրել Կոմունային և նրա աշխատասեր մարդկանց: Մեր գրականության վառ դեմքերից մեկը՝ Ակսել Բակունցը, որ կոմունայի անկաշառ և նվիրված բարեկամն էր, շատ օրեր է անցկացրել այնտեղ, խրախուսել և ոգևորել նրանց: Հայրենասեր գրողը կոմունային է նվիրել իր աշխատություններից մեկը, որով և իր բախտը մեկընդմիշտ կապել է Կոմունայի և նրա նախագահ Արտաշեսի հետ:

… Սակայն վրա հասան անհատի պաշտամունքի սև տարիները, և 1937 թ. Արտաշեսը դարձավ չարանենգ զրպարտանքի զոհ, իսկ նրա փայփայած ու նվաճումների հասած կոմունան դադարեց գոյություն ունենալ: Նա գնդակահարվել է 1937 թ. օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը…

Վերջում մի քանի խոսք Սամսոն Արիստակեսի Կարախանյանի մասին: Նա այն գաղտնապահ, քաջակորով, կամքով արի, հայրենասեր հայորդին էր, ում Ձեմալի սպանության օրը վստահել էր Կ. Ղազազյանը՝ նրան հանձնարարելով հետևել և տեսնել, թե ուր են գնում այն երեք հոգին (Ձեմալը և նրա մարդիկ), ինչը կատարում է շատ մեծ պատասխանատվությամբ… Մնացածն արդեն մեզ պարզ է…

Որպես հոդվածի ամփոփում նշենք, որ այն ինքնանպատակ չէ, նախ անհրաժեշտ է, որ գալիք սերունդները ճանաչեն և դաստիարակվեն այն ազգային հերոսների հայրենանվեր ոգով, որոնք իրենց քաջագործություններով և անձնազոհությամբ օծել են «ոսկե տառերով» իրենց անունները մեր ազգի հերոսական պատմության էջերում և վաստակել են պատմության հավերժ բնակիչներ համարվելուն…

Իսկ պատվագողերն արժանի են հայ ժողովրդի արհամարանքին և նզովքին…

Որպես վերջաբան նշենք, որ հիշողությունը սրբություն է մեզ համար, որի շնորհիվ պետք է մաքրազերծվենք և հասկանանք, որ մեր ուժը միավորված լինելու մեջ է: Եվ միշտ չմոռանանք մեծ վիպասան Ռաֆֆու բնութագրմամբ՝ ինչպիսի նենգ թշնամի հարևան ունենք. «Թուրքն այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա…»: